ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/529/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 09 դեկտեմբերի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի դեկտեմբերի 9-ին քննելով «Հայրենիք» կուսակցության (այսուհետ՝ նաև Կուսակցություն) նախագահ Արթուր Վանեցյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/529/2025 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

Ի. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետով սահմանված Հանձնաժողովի լիազորությունների շրջանակներում, նույն օրենքի 40.1-ին հոդվածով սահմանված կարգով իրականացնելով նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով վերապահված գործառույթը և հիմք ընդունելով Կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Տարեկան հաշվետվություն) ստուգման

արդյունքում վերհանված տվյալները, պարզել է, որ 2023 թվականի ընթացքում Կուսակցության կողմից չի պահպանվել «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք)՝ մինչև 2025 թվականի մարտի 31-ը գործող խմբագրության 24-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պահանջը, այն է՝ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, կուսակցության համար սահմանված նվիրատվության, անդամավճարի կամ մուտքի վճարի սահմանված չափը գերազանցող մասը կամ նվիրատվությունն ամբողջությամբ վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցել պետական բյուջե:

1.2 Կուսակցության բանկային հաշվի քաղվածքի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ առկա է ֆիզիկական անձի կողմից կատարված՝ Սահմանադրական օրենքով սահմանված չափը գերազանցելու դեպք: Մասնավորապես, Վահե Մանուկյանի կողմից 2023 թվականի ընթացքում կատարվել են ընդհանուր 2,750,000 ՀՀ դրամի չափով նվիրատվություններ, որի արդյունքում՝ վերը նշված նվիրատվությունների չափը գերազանցում է մեկ ֆիզիկական անձի կողմից Կուսակցությանը տրվող նվիրատվության՝ մինչև 2025 թվականի մարտի 31-ը գործող խմբագրության Սահմանադրական օրենքով սահմանված առավելագույն չափը 250,000 դրամով, որը երկշաբաթյա ժամկետում չի վերադարձվել նվիրատուին:

1.3 Հանձնաժողովը 2025 թվականի նոյեմբերի 18-ին 01/4459-2025 գրությամբ ծանուցում է ուղարկել Կուսակցության նախագահին՝ հայտնելով, որ անհրաժեշտ է գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը (ստացված է համարվել 2025 թվականի նոյեմբերի 24-ին, հետևաբար՝ երրորդ աշխատանքային օրն է 2025 թվականի նոյեմբերի 27-ը)՝ ժամը 14:00-ին, ներկայանալ Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն մասնակցելու:

Միաժամանակ տեղեկացվել է, որ անհրաժեշտ է գրությունը ստանալուց հետո 5-րդ աշխատանքային օրը (հինգերորդ աշխատանքային օրն է 2025 թվականի դեկտեմբերի 1-ը)՝ ժամը 14:00-ին ներկայանալ գործի քննությանը մասնակցելու նպատակով:

1.4 Կուսակցության նախագահ Արթուր Վանեցյանը, համաձայն ծանուցագրի (հիմք՝ APCO130577670AM փոստային հետադարձ առաքանին), Հանձնաժողովի գրությունն ստացել է 2025 թվականի նոյեմբերի 24-ին:

1.5 2025 թվականի նոյեմբերի 27-ին պատշաճ ծանուցված Կուսակցության նախագահ Արթուր Վանեցյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ 490/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.16-րդ հոդվածով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.6 Հանձնաժողովը 2025 թվականի նոյեմբերի 28-ին hakobyansos@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից ստացել է Կուսակցության նախագահ Արթուր Վանեցյանի կողմից ստացված լիազորագիր, որով հավաստվել է, որ որպես վերջինիս ներկայացուցիչ, ի թիվս «ԼԵԳԻՍՏ» Փաստաբանական Ընկերության ՍՊ ընկերության աշխատակիցների, կարող է հանդես գալ «ԼԵԳԻՍՏ» Փաստաբանական Ընկերության ՍՊ ընկերության աշխատակից Սոս Զավենի Հակոբյանը:

1.7 Նույն օրը՝ 2025 թվականի նոյեմբերի 28-ին Հանձնաժողովը hakobyansos@gmail.com էլեկտրոնային փոստին է ուղարկել թիվ 01/4601-2025 ծանուցագիրը առ այն, որ 2025 թվականի դեկտեմբերի 1-ին՝ ժամը 14:00-ին նշանակված գործի քննության օրը տեղափոխվել է և նշանակվել 2025 թվականի դեկտեմբերի 9-ին՝ ժամը 14:00-ին: Կուսակցության նախագահ Արթուր Վանեցյանի ներկայացուցիչ Սոս Հակոբյանը էլեկտրոնային փոստով ուղարկված նամակով հաստատել է ծանուցագրի ստանալը: Թիվ 01/4601-2025 ծանուցագիրը առաքվել է նաև փոստային առաքմամբ, որը Կուսակցության նախագահ Արթուր Վանեցյանը ստացել է 2025 թվականի դեկտեմբերի 3-ին (հիմք՝ APCO130723271AM փոստային հետադարձ առաքանին):

1.8 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արթուր Վանեցյանի բացակայությամբ 2025 թվականի դեկտեմբերի 9-ին, ժամը՝ 14:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Կուսակցության նախագահ Արթուր Վանեցյանի ներկայացուցիչ Սոս Հակոբյանը 2025 թվականի դեկտեմբերի 8-ին Հանձնաժողով ներկայացրել է գրավոր պարզաբանում (այսուհետ Պարզաբանում), որով մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Ձեր 18.11.2025թ. N 01/4459-2025 գրության համաձայն «Հայրենիք» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) նախագահ Արթուր Վանեցյանին (որպես կուսակցության պաշտոնատար անձի) պատասխանատվության ենթարկելու իրավաչափության պարզման նպատակով հարուցվել է վարչական վարույթ:

Ենթադրյալ իրավախախտումը, ըստ Ձեր կողմից ներկայացված գրության, վերաբերում է Վահե Մանուկյանի կողմից հաշվետու տարում ընդհանուր առմամբ 2.750.000 ՀՀ դրամի չափով գումար փոխանցելուն: Մասնավորապես, Ձեր պնդման համաձայն Վահե Մանուկյանը փոխանցել է օրենքով թույլատրված նվիրատվության գումարի չափից ավել գումար՝ 250.000 ՀՀ դրամի չափով, համաձայն՝ իրավահարաբերությունների պահին գործող «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների:

Սույն վարչական վարույթի լսումները վարչական մարմնի կողմից ի սկզբանե նշանակվել են 01.12.2025թ., այնուհետև վարչական մարմնի նախաձեռնությամբ և որոշմամբ լսումների օրը տեղափոխվել է և նշանակվել է 09.12.2025թ. ժամը 14:00-ին:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով»:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն (մգացումը մերն է)՝

«Վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա:

Վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն, այսինքն՝ տարածվում են նաև այդ ակտերի հրատարակումից առաջ կատարված իրավախախտումների վրա: Վարչական իրավախախտումների համար պատասխանատվություն սահմանող կամ այն ուժեղացնող ակտերը հետադարձ ուժ չունեն:

Վարչական իրավախախտումների գործերի վարույթը իրականացվում է իրավախախտման վերաբերյալ գործի քննության ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա»:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 245-րդ հոդվածի համաձայն՝

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն են՝ յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործը օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը, ընդունված որոշման կատարումն ապահովելը, ինչպես նաև վարչական իրավախախտումների կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները բացահայտելը, իրավախախտումները կանխելը, քաղաքացիներին օրենքները պահպանելու ոգով դաստիարակելը, սոցիալիստական օրինականությունն ամրապնդելը»:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի գործով իրավակարգավորման համաձայն (մգացումը մերն է)՝

«2. Կուսակցությանը տրվող նվիրատվության, ինչպես նաև անդամավճարի և մուտքի վճարի ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի միլիոնապատիկը, այդ թվում՝ **մեկ ֆիզիկական անձի կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը:**

Սույն հոդվածով սահմանված՝ նվիրատվությունների առավելագույն սահմանաչափը չի ներառում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում նախընտրական հիմնադրամներին կատարված մուծումները:

Ֆիզիկական անձը կարող է սույն մասի առաջին պարբերությունում նշված նվիրատվության առավելագույն սահմանաչափի շրջանակներում նվիրատվություն կատարել մեկ և ավելի կուսակցության»:

ՀՀ Վճռաբեկ դատարանը իր 26.12.2026թ. ՎԴ/6495/05/14 նախադեպային որոշմամբ վերլուծելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերի՝ հետադարձ ուժով գործողության հարցը նշել է.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն, այսինքն՝ տարածվում են նաև այդ ակտերի հրատարակումից առաջ կատարված իրավախախտումների վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումներ կատարելու համար անձի պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող իրավական ակտերի հետադարձ ուժի խնդրին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է թիվ ՎԴ/8645/05/11 վարչական գործով 04.07.2013 թվականի որոշման շրջանակներում: Վկայակոչված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը մասնավորապես արձանագրել է հետևյալը.

- եթե վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքը նախատեսում էր ավելի խիստ պատասխանատվություն, քան նախատեսված է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքով (պատասխանատվությունը մեղմացնող օրենք), ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքին համապատասխան, եթե պատասխանատվությունը մեղմացնող օրենքով վերջինիս հետադարձ ուժ տրված չէ,

- եթե վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքը նախատեսում էր ավելի խիստ պատասխանատվություն, քան նախատեսված է

իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքով (պատասխանատվությունը մեղմացնող օրենք), ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքին համապատասխան, եթե այդ օրենքով վերջինիս տրված է հետադարձ ուժ (տե՛ս, «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի տնօրեն Ալեքսանդր Աբրահամյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության թիվ ՎԴ/8645/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.07.2013 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ նշել է, որ իրավական ակտը պատասխանատվությունը մեղմացնող է, եթե սանկցիայում նախատեսված պատասխանատվության տեսակը փոխարինվում է ավելի մեղմ պատասխանատվության տեսակով: Ընդ որում, տուգանքների դեպքում պատասխանատվությունը մեղմացնող է դիտվում այն դրույթը, որով նախկինում գործող տուգանքը փոխարինվել է նվազ չափի տուգանքով (տե՛ս, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունն ընդդեմ Վալերի Ցականյանի թիվ ՎԴ/3135/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):

Վերահաստատելով վկայակոչված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/5366/05/14 վարչական գործով 22.04.2016 թվականի որոշման շրջանակներում անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտն ունի հետադարձ ուժ այն պայմաններում, երբ պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենքը չի նախատեսում այդ ակտին հետադարձ ուժ հաղորդելու վերաբերյալ որևէ դրույթ, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված է, որ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը բոլոր դեպքերում ունեն հետադարձ ուժ: Այդ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ անձի իրավական վիճակը բարելավող, տվյալ դեպքում՝ վարչական

իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերն ունեն հետադարձ ուժ, եթե օրենսդիրը նախատեսել է այն:

Ընդ որում, օրենքին հետադարձ ուժ հաղորդելու օրենսդրի կամքը պետք է հստակ ամրագրում ստացած լինի: Անձի իրավական վիճակը բարելավող օրենքին հետադարձ ուժ տալու օրենսդրի հայեցողական լիազորության իրացումը պետք է հետևի այնպիսի սկզբունքային դրույթների, ինչպիսիք են իրավական որոշակիության սկզբունքը, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների պահպանման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման և մարդու իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը սահմանել է, որ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը բոլոր դեպքերում ունեն հետադարձ ուժ, այսինքն՝ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը բոլոր դեպքերում տարածվում են նաև այդ ակտերի ուժի մեջ մտնելուց առաջ կատարված իրավախախտումների վրա: Այլ կերպ ասած՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից ուղղակիորեն հետևում է, որ նշված օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն՝ անկախ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերում դրանց հետադարձ ուժ տվող հատուկ դրույթի առկայության կամ բացակայության հանգամանքից:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանելով վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերի բոլոր դեպքերում հետադարձ ուժ ունենալու կանոն՝ օրենսդիրն իրացրել է անձի իրավական վիճակը բարելավող կամ պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող օրենքին հետադարձ ուժ տալու իր հայեցողական լիազորությունը՝ հաշվի

առնելով հանրային շահը, իրավական որոշակիության սկզբունքը, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների պահպանման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման և մարդու իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունը:

Փաստորեն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը հստակորեն արտահայտել է իր կամքը՝ նշված օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենքների՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության վերաբերյալ՝ ամրագրելով, որ նույն օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը բոլոր դեպքերում տարածվում են նաև այդ ակտերի ուժի մեջ մտնելուց առաջ կատարված իրավախախտումների վրա՝ անկախ պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող կոնկրետ օրենքում դրան հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի բացակայությունից:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն կամ լրացում նախատեսող բոլոր այն ակտերը, որոնք մեղմացնում կամ վերացնում են վարչական իրավախախտումների համար նախատեսված պատասխանատվությունը, ունեն հետադարձ ուժ՝ անկախ պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող կոնկրետ օրենքում դրան հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի առկայության կամ բացակայության հանգամանքից, քանի որ այդ ակտերում դրանց հետադարձ ուժ տալու մասին դրույթ ներառելու անհրաժեշտությունը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավակարգավորման պարագայում բացակայում է: Ընդ որում, պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենքում դրան հետադարձ ուժով գործողության վերաբերյալ դրույթի բացակայությունը չի կարող դիտարկվել որպես այդ ակտի՝ հետադարձ ուժի գործողության արգելք, քանի որ դա կհակասի իրավական որոշակիության և օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների պահպանման անհրաժեշտության սկզբունքներին:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն սահմանող օրենքի՝ ժամանակի մեջ գործողության հետևյալ կանոններով.

- ընդհանուր կանոնի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ գործող օրենքով,

- եթե մինչև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշման ընդունումն ուժի մեջ է մտել տվյալ իրավախախտման համար նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենք, ապա վարչական իրավախախտում կատարած անձին պատասխանատվության ենթարկելու հարցը պետք է լուծվի պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենքով՝ անկախ պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող կոնկրետ օրենքում դրան հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի առկայության կամ բացակայության հանգամանքից (տե՛ս, Վարդան Սարգսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/5366/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը)»:

Վերը վկայակոչված նորմերի և դրանց վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի հայտնած իրավական դիրքորոշումների համաձայն, եթե մինչև վարչական մարմնի կողմից պատասխանատվություն ենթադրող վարչական ակտի ընդունումը ուժի մեջ է մտել իրավախախտման համար պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող օրենք, ապա տվյալ օրենքը ունի հետադարձ ուժ անկախ դրանում հետադարձ ուժի մասին կարգավորման առկայությունից:

Ընդ որում սույն փաստերին նորմերը կիրառելու տեսանկյունից հնարավոր տարընկալումներից խուսափելու նպատակով անհրաժեշտ ենք համարում վկայակոչել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի 28.11.2014թ. ՎԴ/3135/05/13 վարչական գործով հայտնած իրավական դիրքորոշումը. «Վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրավական ակտը

համարվում է պատասխանատվությունը վերացնող, եթե դրանով իրավախախտում չի համարվում այն արարքը, որը նախկին իրավական ակտով համարվում էր իրավախախտում»:

05.12.2024թ. ընդունված «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-506-Ն սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի ուժով փոփոխվել է «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի, ինչի արդյունքում ֆիզիկական անձի կողմից մեկ տարվա ընթացքում կուսակցությանը (կուսակցություններին) օրենքով թույլատրելի նվիրատվության սահմանաչափը 2.500.000 ՀՀ դրամից դարձել է 10.000.000 ՀՀ դրամ: Նշված օրենքը մտել է օրինական ուժի մեջ 01.04.2025թ.:

Ուստի, 01.04.2025 թվականից ֆիզիկական անձի կողմից կուսակցություններին մեկ տարվա ընթացքում թույլատրելի նվիրատվության չափը կազմում է 10.000.000 ՀՀ դրամ:

Սույն վարչական վարույթը հարուցվել է հիշյալ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո: Ավելին, հետադարձ ուժի կիրառման տեսանկյունից կարևորվում է ոչ թե վարչական վարույթի հարուցման, այլ՝ անձին պատասխանատվության ենթարկելու պահը, ինչն մինչև օրս տեղի չի ունեցել:

Հետևաբար, հիմք ընդունելով ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 8-րդ հոդվածը, դրա վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, գտնում ենք, որ սույն գործի նկատմամբ ենթակա է կիրառման ՀՕ506-Ն սահմանադրական օրենքի գործող կարգավորումները, որոնց համաձայն վարույթի նյութերում նկարագրված արարքը իրավախախտում չի հանդիսանում:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

«Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը.»

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն (մգացումը մերն է)՝

«Քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև **սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում**»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50- րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն (մգացումը մերն է)՝

«2. Վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝

ա) անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում.

բ) օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը»:

Հաշվի առնելով ամբողջ վերը նշվածը, և հիմք ընդունելով ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 282-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) ենթակետը, խնդրում ենք կարճել սույն վարչական վարույթը:»:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/529/2025 վարչական վարույթում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ 2020 թվականից Արթուր Գագիկի Վանեցյանը հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ նախագահը:

3.2 Հանձնաժողովին 2024 թվականի հոկտեմբերի 11-ին ներկայացված գրությամբ, հղում տալով Կուսակցության կանոնադրության 18-րդ հոդվածի 5, 11 և 14 կետերին, Կուսակցությունը հայտնել է, որ Կուսակցության ղեկավարումն իրականացնում է Կուսակցության նախագահը, ով որոշումներ է կայացնում Կուսակցության ընթացիկ գործունեության վերաբերյալ, տնօրինում է Կուսակցության գույքն ու դրամական միջոցները:

3.3 Կուսակցության Տարեկան հաշվետվությունում առկա տվյալների համաձայն 2023 թվականի ընթացքում Կուսակցությունը ստացել է Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի մարտի 31-ը գործող խմբագրության 24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ֆիզիկական անձի կողմից կուսակցությանը տրվող սահմանաչափը գերազանցող նվիրատվություն՝ 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

3.4 Կուսակցության նախագահ Արթուր Վանեցյանի կողմից չեն պահպանվել Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի մարտի 31-ը գործող խմբագրության

24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ ֆիզիկական անձի կողմից կուսակցությանը տրվող, օրենքով սահմանված սահմանաչափը գերազանցող նվիրատվություններ ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում կուսակցության համար սահմանված նվիրատվության գերազանցող մասը կամ նվիրատվությունն ամբողջությամբ նվիրատուին վերադարձնելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պետական բյուջե փոխանցելու պահանջը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 Սահմանադրության 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

4.2 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներն են՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների (այսուհետ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվություններ) ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգումը:

4.3 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը:

4.4 Սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվության

ստուգումն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն օրենքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով:

4.5 Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի մարտի 31-ը գործող խմբագրության 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կուսակցությանը տրվող նվիրատվության, ինչպես նաև անդամավճարի և մուտքի վճարի ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրհազարապատիկը, այդ թվում՝ մեկ ֆիզիկական անձի կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկը:

4.6 Սահմանադրական օրենքի գործող խմբագրության 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կուսակցությանը տրվող նվիրատվության, ինչպես նաև անդամավճարի և մուտքի վճարի ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի միլիոնապատիկը, այդ թվում՝ մեկ ֆիզիկական անձի կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը:

4.7 Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի մարտի 31-ը գործող խմբագրության 24-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, կուսակցության համար սահմանված նվիրատվության, անդամավճարի կամ մուտքի վճարի սահմանված չափը գերազանցող մասը կամ նվիրատվությունն ամբողջությամբ վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցել պետական բյուջե:

4.8 Օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն, այսինքն՝ տարածվում են նաև այդ ակտերի հրատարակումից առաջ կատարված իրավախախտումների վրա:

4.9 Օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.10 Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:

4.11 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենսգրքի 166.1-ին, 169.28-րդ, 169.31-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ, 189.16-րդ, 189.19-189.24-րդ, 206.14-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական

իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.14 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.15 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50- րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

4.16 Օրենսգրքի 247-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության դեպքում:

4.17 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.18 Օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝

1) տվյալ գործի քննությունը վերաբերում է, արդյոք, իր իրավասությանը.

2) ճիշտ են կազմվել, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը.

3) գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են, արդյոք, դրա քննության ժամանակի և տեղի մասին.

4) պահանջվել են, արդյոք, անհրաժեշտ լրացուցիչ նյութեր.

5) վարչական պատասխանատվության ենթարկվող անձի, տուժողի, օրինական ներկայացուցիչների, փաստաբանի միջնորդությունների մասին:

4.19 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել հաշվետու տարվա ընթացքում Կուսակցության ֆինանսական միջոցների և ծախսերի վերաբերյալ հանրային հաշվետվողականությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը: Նշված դրույթի նպատակն է **բոլոր կուսակցությունների համար հավասար հնարավորությունների ապահովումը, ինչպես նաև բոլոր կուսակցությունների ֆինանսական խոցելիության նվազեցման երաշխիքների ապահովումը:**

Նշված դրույթը նպատակ է հետապնդում վերացնել կոռուպցիոն այնպիսի ռիսկեր, ինչպիսիք են, օրինակ, կուսակցության ղեկավար մարմնի անդամի կողմից օրենքով սահմանված չափը գերազանցող նվիրատվության ներգրավումը: Այս զանցակազմի օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել կուսակցության ղեկավար մարմնի անդամի ակտիվ, նախաձեռնողական գործողություններով, երբ վերջիններս ձեռնարկում են կուսակցության օգտին օրենքով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունների ներգրավումը կամ պարզապես համաձայնություն են տալիս այդպիսի առաջարկություններին:

Հարկ է ընդգծել, որ Օրենսդրի կողմից նման կարգավորումների՝ սահմանադրական օրենքով ամրագրումն ինքնանպատակ չէ և միտված է կարգավորելու կուսակցությունների մուտքերը՝ կանխելու կուսակցությունների կախվածությունը անհատներից, նպաստելու կուսակցությունների միջև ավելի հավասար պայմանների ապահովմանը, սահմանափակելու կուսակցությունների վրա անտեղի ազդեցությունը, խթանելով արդարությունը և նվազեցնելով կոռուպցիայի ռիսկը: Նման կարգավորումների պայմաններում սահմանափակվում են անհատական ներդրումները, ինչը խթանում է քաղաքական գործընթացներում լայն հասարակության ավելի մեծ ներգրավվածությունը և մասնակցությունը:

Միաժամանակ, անհատների կողմից մեծածավալ նվիրատվությունները կարող են հանգեցնել արտոնյալ վերաբերմունքի կամ քաղաքական որոշումների վրա ազդեցության ակնկալիքների, և վերը նշված նորմով մեղմվում են նման ռիսկերը՝ դրանով իսկ նպաստելով քաղաքական գործընթացների ամբողջականությանը:

Նշված նորմի նպատակն է նաև առանձին անհատների կողմից կուսակցությունների ամբողջական գործունեության ֆինանսավորումից խուսափելը, առանձին կուսակցությունների՝ մեծ կարողություններ ունեցող անհատների ակումբների վերածվելու հնարավորության բացառումը, ինչից ելնելով էլ՝ Օրենսդրի կողմից սահմանվել է անհատների նվիրատվության առավելագույն շեմի սահմանաչափ:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել՝ արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս է պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Սույն գործով խախտման (արարքի) որակական կողմը գնահատելիս Հանձնաժողովն էական է համարում հետևյալ հանգամանքների առկայությունը.

2023 թվականի ընթացքում Վահե Մանուկյանի կողմից Կուսակցությանը փոխանցվել է ընդհանուր՝ 2,750,000 ՀՀ դրամի չափով գումար, որը գերազանցում է Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի մարտի 31-ը գործող խմբագրության 24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված մեկ ֆիզիկական անձի կողմից Կուսակցությանը տրվող նվիրատվության առավելագույն չափը 250,000 ՀՀ դրամով:

Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի մարտի 31-ը գործող խմբագրության 24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ֆիզիկական անձի կողմից Կուսակցությանը տրվող նվիրատվության առավելագույն չափը գերազանցող գումարը Արթուր Վանեցյանի կողմից երկշաբաթյա ժամկետում չի վերադարձվել նվիրատուին, կամ դրա անհնարինության դեպքում՝ չի փոխանցվել պետական բյուջե՝ չպահպանելով Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի մարտի 31-ը գործող խմբագրության 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը:

Սահմանադրության 73-րդ հոդվածի 2-րդ մասի և Օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները վերլուծության ենթարկելով Հանձնաժողովը եզրահանգում է, որ վարչական իրավախախտման դեպք քննելիս Հանձնաժողովը պետք է հետադարձ ուժ տա տվյալ պահին գործող այն իրավակարգավորումներին, որոնք թեև չեն գործել ենթադրյալ զանցանքի կատարման պահին, սակայն մինչև համապատասխան գործով Օրենսգրքի 282-րդ հոդվածով նախատեսված որոշման ընդունումը մտել են ուժի մեջ և վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող բնույթի են:

Հետադարձության կիրառման վերաբերյալ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1000 որոշման շրջանակներում արտահայտել է այն դիրքորոշում, որ «(…) ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից: Այս մոտեցումը բխում է իրավական որոշակիության, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների, մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից:»:

Միևնույն ժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ փաստում է, որ օրենսդիրը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանելով, որ վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը **բոլոր դեպքերում ունեն հետադարձ ուժ**, իրացրել է անձի իրավական վիճակը բարելավող կամ պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող օրենքին հետադարձ ուժ տալու իր հայեցողական լիազորությունը: Հետևաբար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն կամ լրացում նախատեսող բոլոր այն ակտերը, որոնք մեղմացնում կամ վերացնում են վարչական իրավախախտումների համար նախատեսված պատասխանատվությունը, ունեն հետադարձ ուժ՝ անկախ պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող կոնկրետ օրենքում դրան հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի առկայության կամ բացակայության հանգամանքից, քանի որ այդ ակտերում դրանց հետադարձ ուժ տալու մասին դրույթ ներառելու անհրաժեշտությունը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավակարգավորման պարագայում բացակայում է:» (*տե՛ս, Կարեն Սարդարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/6495/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է դիրքորոշում առ այն, որ «(...) - ընդհանուր կանոնի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ գործող օրենքով,

- եթե մինչև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշման ընդունումն ուժի մեջ է մտել տվյալ իրավախախտման համար նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենք, ապա

վարչական իրավախախտում կատարած անձին պատասխանատվության ենթարկելու հարցը պետք է լուծվի պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող օրենքով՝ անկախ պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող կոնկրետ օրենքում դրան հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթի առկայության կամ բացակայության հանգամանքից» *(տե՛ս, Վարդան Սարգսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/5366/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):*

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը իր մեկ այլ որոշմամբ նշել է. «(…) Վերոհիշյալ իրավանորմերի համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ (…)

- եթե վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքն ուժը կորցնում է, այսինքն՝ տվյալ վարչական իրավախախտման համար նախատեսված պատասխանատվությունը վերացվում է, ապա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա վարչական **իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման, եթե պատասխանատվությունը վերացնող օրենքով վերջինիս տրված է հետադարձ ուժ**, (…)

(տե՛ս «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի տնօրեն Ալեքսանդր Աբրահամյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության թիվ ՎԴ/8645/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.07.2013 թվականի որոշումը):

Զարգացնելով վերոնշյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում բացահայտել, թե որոնք են համարվում պատասխանատվությունը վերացնող, պատասխանատվությունը մեղմացնող ակտեր:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրավական ակտը համարվում է պատասխանատվությունը վերացնող, եթե դրանով **իրավախախտում չի համարվում այն արարքը, որը նախկին իրավական ակտով համարվում էր իրավախախտում** *(տե՛ս Վալերի Ցականյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն»*

ծառայության թիվ ՎԴ/3135/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.28.2014 թվականի որոշումը)»:

Համակարգային վերլուծության ենթարկելով վերոգրյալ իրավական կարգավորումները, Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումները՝ Հանձնաժողովը եզրահանգում է, որ սույն գործով օրենսգրքի 189.16-րդ հոդվածը ենթակա է կիրառման՝ հետադարձ ուժ տալով գործող իրավակարգավորումներին:

Օրենսգրքի 189.16-րդ հոդվածը, ըստ էության, պարունակում է բլանկետային նորմ և կուսակցությունների կողմից իրավախախտման փաստն արձանագրելու համար անհրաժեշտ է բացահայտել, թե ինչ չափով դրամական նվիրատվությունն է համարվում թույլատրելի, որից ավելի նվիրատվությունն օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելը կհանգեցնի վարչական իրավախախտման:

Մեկ ֆիզիկական անձի կողմից Կուսակցությանը տրվող նվիրատվության առավելագույն չափը սահմանված է Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասով:

Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի մարտի 31-ը գործող խմբագրության 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեկ ֆիզիկական անձի կողմից Կուսակցությանը տրվող նվիրատվության առավելագույն չափը նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով է (2,500,000 ՀՀ դրամ):

Սահմանադրական օրենքի գործող խմբագրության 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեկ ֆիզիկական անձի կողմից Կուսակցությանը տրվող նվիրատվության առավելագույն չափը նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկի չափով է (10,000,000 ՀՀ դրամ):

Վերոգրյալից պարզ է դառնում, որ եթե Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի մարտի 31-ը գործող խմբագրության 24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված մեկ ֆիզիկական անձի կողմից Կուսակցությանը տրվող նվիրատվության առավելագույն չափի պայմաններում Կուսակցության նախագահ Արթուր Վանեցյանի կողմից կատարվել էր Օրենսգրքի 189.16-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում, քանի

որ օրենքով սահմանված ժամկետում չէր վերադարձվել Սահմանադրական օրենքով սահմանված չափը 250,000 ՀՀ դրամով գերազանցող նվիրատվությունը, ապա Սահմանադրական օրենքի գործող խմբագրության պայմաններում, Կուսակցության՝ 2023 թվականին Վահե Մանուկյանից ստացած նվիրատվությունը չի գերազանցում սահմանված մեկ ֆիզիկական անձի կողմից կուսակցությանը տրվող նվիրատվության առավելագույն չափը՝ 10,000,000 ՀՀ դրամը, ուստի՝ Կուսակցության նախագահ Արթուր Վանեցյանը ներկայումս չի կարող պատասխանատվության ենթարկվել կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն որոշումը կայացվում է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՕ-506-Ն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո (ուժի մեջ է մտել 2025 թվականի ապրիլի 1-ից), իսկ մեկ ֆիզիկական անձի կողմից կուսակցությանը տրվող նվիրատվության առավելագույն չափը՝ 10,000,000 ՀՀ դրամը սահմանվել է հիշյալ օրենքի 6-րդ հոդվածով, ուստի սույն գործով Կուսակցության նախագահ Արթուր Վանեցյանի նկատմամբ 189.16-րդ հոդվածի կիրառումը քննարկելիս, որպես թույլատրելի նվիրատվության չափ ենթակա է կիրառման Սահմանադրական օրենքի գործող խմբագրության 24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված 10,000,000 ՀՀ դրամը: Հետևաբար՝ հիմք ընդունելով Օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը՝ Կուսակցության նախագահ Արթուր Վանեցյանը ներկայումս չի կարող վարչական պատասխանատվության ենթարկվել Օրենսգրքի 189.16-րդ հոդվածով:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 282-րդ հոդվածի 1-ին մասի 2 րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հայրենիք» կուսակցության նախագահ Արթուր Վանեցյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/529/2025 գործի վարույթը կարճել՝ իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն սահմանված կարգով Արթուր Վանեցյանին հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ